ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Աշոտ Մարկոսյան, Նունե Գեղամյան

Աղքատության հաղթահարման և եկամտային անհավասարության վերացումն այն գերխնդիրներից է, որի հաջող և արագ լուծմամբ է պայմանավորված հետագա առաջընթացը: Ինչպես մյուս պետությունները, Հայաստանի Հանրապետությունը ևս զգալի ջանքեր է գործադրում աղքատության և անհավասարության դեմ պայքարելու համար: Մասնավորապես ՀՀ կառավարության կողմից մշակվել և իրականացվում են աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ցուցանիշների դիտարկումը:

Ամփոփելով անցումային տնտեսությամբ երկրներում գոյություն ունեցող հիմնախնդիրները, վերլուծելով միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին և նախկին խորհրդային հանրապետություններին տրվող գնահատականները, ՀՀ-ում աղքատության պատկերը բնութագրող բազմաթիվ վիճակագրական ցուցանիշներն ու աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նպատակակետերը՝ առաջարկվում են պետական սոցիալական քաղաքականության այն գերակայությունները, որոնք միտված են բնակչության եկամուտների հավասարեցման հիմնախնդրի լուծմանը:

1. Մարդկության արդի ամենակնճռոտ հիմնախնդիրը՝ աղքատություն լիության մեջ

Թեև մի շարք երկրներում և տարածաշրջաններում աղքատության դեմ պայքարը հասել է զգալի հաջողությունների, սակայն հատկապես ծայրահեղ աղքատությունն այսօր էլ մնում է քաղաքակրթության դժվարլուծելի խնդիր, դեռևս մեծ է այն մարդկանց թիվը, որոնք օրական ստանում են $1-ից պակաս եկամուտ, սոված են, զրկված են նվազագույն ապրուստի համար անհրաժեշտ տարրական միջոցների՝ սննդի, ջրի, էլեկտրաէներգիայի սպառման և բնականոն սանիտարական պայմաններում ապրելու հնարավորությունից: Բավական է նշել, որ աշխարհում ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդիկ 1999թ. կազմում էին 23,2%:

Աշխարհի բնակչության մեծ մասը՝ 4 մլրդ մարդ, վաստակում են մեկ մարդու հաշվով տարեկան $1500-ից պակաս եկամուտ և կազմում են եկամտային բուրգի հիմքը: Բուրգի երկրորդ մակարդակում են գտնվում 1,5-1,75 մլրդ մարդ, որոնք ապրում են մեկ մարդու հաշվով տարեկան

$1500-ից 20000-ով: Վերին հատվածում են գտնվում զգալիորեն քիչ թվով մարդիկ՝ 75-ից 100 մլն, որոնք ստանում են մեկ մարդու հաշվով տարեկան $20000-ից ավելի եկամուտ [1]:

Վերջին տարիներին աղքատության դեմ պայքարը դարձել է երկրների միջև երկխոսության հիմնական թեման. ոչ թե շահույթներ (օգուտներ) ստանալը, այլ աղքատության դեմ պայքարն է հետագա զարգացման հիմնական նպատակը: Ասվածի վառ օրինակն է ՄԱԿ «Հազարամյակի հռչակագիրը», որն աղքատության վերացման համընդհանուր նպատակի ամրագրման արտահայտությունն է: Ինչպես հարուստ, այնպես էլ աղքատ պետություններն իրենց պատրաստակամությունն են հայտնել օժանդակել աղքատության վերացման, մարդկանց մեջ արժանապատվության ամրապնդման, խաղաղության, հավասարության հասնելու և բնապահպանական հավասարակշռությունը պահպանելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործին:

Ընդլայնվել է նաև աղքատության հասկացությունը, վերացվել այն նեղ սահմանումը, ըստ որի հաշվի էր առնվում բացառապես եկամուտների և սպառման մակարդակը: Այն փոխարինվել է համալիր հասկացությամբ, որը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթությունը և առողջապահությունը, սոցիալական և քաղաքական գործընթացներին քաղաքացու մասնակցության հնարավորությունը, անձի ազատությունը և անվտանգությունը, շրջակա միջավայրի որակը և այլն: Զարգացման ոլորտում գործունեություն ծավալող հանրությունն սկսել է օգտագործել ավելի իրատեսական միջոցներ առաջիկա նպատակներին հասնելու համար՝ առանձին երկրների առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակով: Այս ոլորտում իրականացվող վերլուծություններն այժմ ավելի ճկուն են, չեն պարունակում համատարած պետական վերահսկողության (ինչպես դա արվում էր 1960-1970-ական թթ.) և չկարգավորվող շուկաների մասին (1980-1990թթ.) նախկինում ընդունված կարծրացած տեսակետները [2]:

2. Բնակչության աղքատության ինդեքսը՝ որպես մարդկային ներուժի գնահատման բնութագիր

Դիտարկենք մարդկային ներուժի զարգացումը բնութագրող ցուցանիշներից մի քանիսը և դրանց հաշվարկման մոտեցումները: Այդ ցուցանիշները թույլ են տալիս բացահայտել նաև զարգացած և զարգացող երկրների միջև գոյություն ունեցող տարբերությունները:

Առաջինը մարդկային ներուժի զարգացման ցուցիչն է (ՄՆԶՑ), որն ընդհանրացված ցուցանիշ է և բնութագրում է ուսումնասիրվող երկրում մարդկային ներուժի զարգացման երեք կարևորագույն տարրերի ուղղու-

թյամբ ձեռքբերումների միջին մակարդակը: Այդ տարրերն են՝

- երկարատև և առողջ կյանքը, որը բնութագրվում է ծնվելու պահից կյանքի սպասվելիք տևողությամբ,
- կրթվածությունը, որը բնութագրվում է՝ ա) չափահաս բնակչության գրագիտության մակարդակով (այս գործոնի կշիռը կազմում է երկու երրորդը) և բ) բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների համախառն գործակցով (այս գործոնի կշիռը կազմում է մեկ երրորդը),
- արժանապատիվ կյանքի մակարդակը, որը չափվում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով (ԱՄՆ դոլարով արտահայտված՝ հաշվի առնելով գնողունակության հարաբերակցությունը (*паритет*):

Մինչև ՄՆԶՑ մեծությունը որոշելը հաշվարկվում է վերը նշված յուրաքանչյուր տարրի ցուցիչը՝ հետևյալ բանաձևի կիրառմամբ.

$$\text{տարրի ցուցիչը} = \frac{\text{փաստացի արժեքը} - \text{նվազագույն արժեքը}}{\text{առավելագույն արժեքը} - \text{նվազագույն արժեքը}}$$

Ցուցանիշների առավելագույն և նվազագույն արժեքները սահմանված են որոշակի թվային մեծությունների տեսքով: Մասնավորապես, կյանքի սպասվելիք տևողության առավելագույն արժեքը 85 տարի է, նվազագույնը՝ 25, չափահաս բնակչության գրագիտության աստիճանի, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների համախառն գործակցի առավելագույն արժեքը 100% է, նվազագույնը՝ 0%: Ինչ վերաբերում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ մեծությանը, ապա այս ցուցանիշի առավելագույն արժեքն ընդունված է $40000 (հաշվի առնելով գնողունակության հարաբերակցությունը), իսկ նվազագույնը՝ 100 [3]:

Յուրաքանչյուր գործոնի համար համապատասխան ցուցիչի հաշվարկից հետո հաշվարկվում է ՄՆԶՑ-ն՝ որպես առանձին տարրերի համար ստացված ցուցիչների միջին թվաբանական մեծություն:

Բնակչության աղքատության ցուցանիշները զարգացող և զարգացած երկրների համար հաշվարկվում են տարբեր մեթոդաբանությամբ: Զարգացող երկրների համար բնակչության աղքատության ցուցիչը (ԲԱՑ-1) դիտարկում է ՄՆԶՑ-ում տեղ գտած երեք կարևորագույն գործոններ՝

- կյանքի սպասվելիք տևողությունը. այս դեպքում այն ընդունվում է մինչև 40 տարեկան ապրելու հավանականություն ունեցող մարդկանց տեսակարար կշիռը (P_1),
- կրթվածությունը՝ որպես չափահաս բնակչության գրագիտության

աստիճան (P_2),

- կյանքի արժանապատիվ մակարդակը (P_3), որը չափվում է որպես հետևյալ երկու գործոնների միջին կշռված ցուցանիշ՝ բնակչության այն մասի, որին հասու չէ վերամշակված ջրից օգտվելու հնարավորությունը և երեխաների այն մասի, որոնց քաշը պակաս է իրենց տարիքի համար բնականոն համարվող քաշից:

Պետք է նշել, որ նախկինում արժանապատիվ կյանքի մակարդակը չափելիս օգտագործվում էր նաև բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորության ցուցանիշը, սակայն վերջին տարիների համար հավաստի տեղեկությունների բացակայության պատճառով այն բացառվեց հաշվարկման բանաձևից:

ԲԱՑ-1-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$ԲԱՑ\text{-}1= [1/3\ (P^{\alpha}_1 + P^{\alpha}_2 + P^{\alpha}_3)]^{1/\alpha}$,

որտեղ $\alpha=3$:

Զարգացած երկրների (ավելի ստույգ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ընտրված անդամ երկրների) համար հաշվարկվող համանման ցուցանիշը (ԲԱՑ-2), բացի վերը նշված գործոններից, ընդգրկում է ևս մեկը, որը հաշվի է առնում սոցիալական մեկուսացվածությունը: Ուստի, ԲԱՑ-2-ը ցույց է տալիս բնակչության զրկվածությունը ըստ չորս գործոնների՝

- կյանքի սպասվելիք տևողությունը. այս դեպքում ընդունվում է մինչև 60 տարեկան ապրելու հավանականություն ունեցող մարդկանց տեսակարար կշիռը (P_1),
- կրթվածությունը՝ որպես ֆունկցիոնալ առումով անգրագետ մարդկանց աստիճան (P_2),
- կյանքի արժանապատիվ մակարդակը (P_3), որն արտահայտվում է աղքատության գծից ներքև ապրող մարդկանց տեսակարար կշռով: Ընդ որում, աղքատության գիծ է համարվում տնային տնտեսությունների կողմից տնօրինվող եկամուտների ճշգրտված մեծության 50%-ից պակաս մեծությունը,
- սոցիալական մեկուսացվածությունը (P_4), որը չափվում է «լճացած» գործազրկության մակարդակով (12 և ավելի ամիս ժամանակահատվածում գործազուրկ լինելու հանգամանքը):

ԲԱՑ-2-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$ԲԱՑ\text{-}2= [1/4\ (P^{\alpha}_1 + P^{\alpha}_2 + P^{\alpha}_3 + P^{\alpha}_4)]^{1/\alpha}$,

որտեղ $\alpha=3$ [3, c. 284]:

Աղյուսակ 1

Մարդկային ներուժի զարգացման ցուցիչները մի շարք երկրների համար [3, c.161-163]

Երկրի վարկանիշն ըստ ՄՆԶՑ	Երկիրը	Կյանքի վայրկյանային ակնկալիքը ծննդյան պահին, տարի, 2002թ.	Չափահաս բնակչության գրագիտության մակարդակը (15 և ավելի տարեկան տարիքի անձանց), %, 2002թ.	Բնակչության ընդհանուր թվի նկատմամբ միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրակրթության ընդգրկվածության մակարդակը, %, 2001/02թթ.	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (ԱՄՆ դոլարով, հաշվի առնելով գնողունակության պարիտետը), 2002թ.	Ընդհանուր տնտեսական գործոնը	Ընդհանուր միջավայրի գործոնը	ՀՆԱ գործոնը	Մարդկային ներուժի զարգացման գործոնի արժեքը, 2002թ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
Մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներ									
1	Նորվեգիա	78.9	... [1]	98	36 600	0.90	0.99	0.99	0.956
2	Շվեդիա	80.0	... [1]	114	26 050	0.92	0.99	0.93	0.946
3	Ավստրալիա	79.1	... [1]	113	28 260	0.90	0.99	0.94	0.946
4	Կանադա	79.3	... [1]	95	29 480	0.90	0.98	0.95	0.943
5	Նիդեռլանդներ	78.3	... [1]	99	29 100	0.89	0.99	0.95	0.942
6	Բելգիա	78.7	... [1]	111	27 570	0.90	0.99	0.94	0.942
7	Իսլանդիա	79.7	... [1]	90	29 750	0.91	0.96	0.95	0.941
8	ԱՄՆ	77.0	... [1]	92	35 750	0.87	0.97	0.98	0.939
9	Ճապոնիա	81.5	... [1]	84	26 940	0.94	0.94	0.93	0.938
10	Իռլանդիա	76.9	... [1]	90	36 360	0.86	0.96	0.98	0.936
36	Էստոնիա	71.6	99.8	96	12 260	0.78	0.98	0.80	0.853
41	Լիտվա	72.5	99.6	90	10 320	0.79	0.96	0.77	0.842
50	Լատվիա	70.9	99.7	87	9 210	0.76	0.95	0.75	0.823
Մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներ									
57	Ռուսաստան	66.7	99.6	88	8 230	0.69	0.95	0.74	0.795
62	Բելառուս	69.9	99.7	88	5 520	0.75	0.95	0.67	0.790
70	Ուկրաինա	69.5	99.6	84	4 870	0.74	0.94	0.65	0.777
78	Ղազախստան	66.2	99.4	81	5 870	0.69	0.93	0.68	0.766
82	Հայաստան	72.3	99.4	72	3 120	0.79	0.90	0.57	0.754
86	Թուրքմենստան	66.9	98.8	81	4 300	0.70	0.93	0.63	0.752
91	Ադրբեջան	72.1	97.0	69	3 210	0.78	0.88	0.58	0.746
97	Վրաստան	73.5	100.0	69	2 260	0.81	0.89	0.52	0.739
107	Ուզբեկստան	69.5	99.3	76	1 670	0.74	0.91	0.47	0.709
110	Ղրղզստան	68.4	97.0	81	1 620	0.72	0.92	0.46	0.701
113	Մոլդովա	68.8	99.0	62	1 470	0.73	0.87	0.45	0.681
116	Տաջիկստան	68.6	99.5	73	980	0.73	0.90	0.38	0.671

[1] ՄՆԶՑ հաշվարկման նպատակով ընդունվել է 99.0% նշանակությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տեղեկություններ մարդկային ներ-

ուժի զարգացման ցուցանիշներով առաջին 10 տեղերում գտնվող զարգացած և նախկին ԽՍՀՄ 15 երկրների մասին:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ կրթվածության մակարդակով նորանկախ պետությունները քիչ են զիջում կամ գրեթե չեն զիջում զարգացած երկրներին: Կարելի է փաստել, որ կյանքի սպասվելիք տևողության մակարդակը նույնպես գտնվում է համադրելիության շրջանակներում: Մինչդեռ, նախկին խորհրդային պետությունների առանցքային հիմնախնդիրը ՀՆԱ ընդունելի մակարդակին հասնելն էր: Այնուամենայնիվ, Բալթյան երկրներին հաջողվել է այդ ցուցանիշների լավացման շնորհիվ ընդգրկվել մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում:

3. Աղքատությունը և անհավասարությունը ԱՊՀ երկրներում անցումային ժամանակաշրջանում

Բնակչության կենսամակարդակի կտրուկ անկում նկատվեց նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, ինչը համայնավարական համակարգի կազմալուծման հետևանք էր: Ըստ որում, նախկին ԽՍՀՄ (որտեղ ավելի շատ խեղաթյուրումներ գոյություն ունեին, քան «շուկայական սոցիալիզմի» փորձ ունեցող մյուս երկրներում՝ նախկին Հարավսլավիայում, Հունգարիայում, Չեխիայում և Լեհաստանում) տնտեսական անկման խորությունը պայմանավորված էր ինչպես խորհրդային համակարգային և ինստիտուցիոնալ ժառանգությամբ, այնպես էլ վերափոխումների անարդյունավետ ռազմավարությամբ: Ինչ վերաբերում է նշված երկրորդ գործոնին, ապա նկատի ունենք բարեփոխումների իրականացման դանդաղ տեմպերը, ազատականացման ոչ հետևողական ընթացքը, բյուջետային հավասարակշռությունն ապահովելու և ինֆլյացիայի կառավարման անընդունակությունը, իսկ մի շարք երկրներում՝ նաև մասնավորեցումն ու կառուցվածքային վերափոխումներն ուշ սկսելը:

Նշված գործոնների (խորհրդային ժառանգության և բարեփոխումների ընթացքի) ազդեցության բացահայտումը հեշտ խնդիր չէ: Այստեղ անուղղակի ցուցանիշների դերում կարող են հանդես գալ Բալթյան երկրների արդյունքները, որտեղ սկզբնական ծանր պայմանները սկզբունքորեն համեմատելի էին նախկին ԽՍՀՄ կազմում գտնվող մյուս եվրոպական երկրների հետ: Էստոնիայում (տե՛ս *Աղյուսակ 2*) անկումը շարունակվեց հինգ տարի (անկախություն ձեռք բերելուց և շուկայական բարեփոխումները սկսելուց հետո՝ երեք տարի) և կազմեց 38%: Սխալված չենք լինի, եթե Էստոնիայի և, օրինակ, Ռուսաստանի (որտեղ գումարային անկումը ինը տարիների ընթացքում կազմեց 48,5%), Ուկրաինայի (տասը տարիների ընթացքում՝

61,5%) կամ Մոլդովայի (տասը տարիների ընթացքում՝ 67%) ցուցանիշների միջև տարբերությունը դիտարկենք որպես համադրելի սկզբնական պայմաններ ունեցող երկրներում վերափոխումների տարբեր ռազմավարությունների կիրառման մակրոտնտեսական արդյունքը բնութագրող անուղղակի ցուցանիշ:

Աղյուսակ 2

Բալթյան և ԱՊՀ երկրներում իրական ՀԱԱ-ն (1989 = 100)[1]

Երկիրը	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002
Էստոնիա	93,5	80,8	69,3	63,2	62,0	64,6	67,1	73,7	77,1	76,6	82,1	86,2	91,1
Լատվիա	102,9	92,2	60,0	51,1	52,2	51,8	53,7	58,2	61,0	62,7	67,0	72,1	76,1
Լիտվա	95,0	89,6	70,5	59,1	53,3	55,1	57,6	61,8	65,0	62,5	64,8	68,7	72,8
Բելառուս	97,0	95,8	86,6	80,1	70,0	62,7	64,4	71,8	77,8	80,5	85,1	88,6	92,8
Մոլդովա	97,6	80,5	57,1	56,4	38,8	38,3	36,0	36,6	34,2	33,0	33,7	35,8	38,4
Ռուսաստան	100,0	94,5	76,9	66,9	57,9	55,5	53,6	54,1	51,5	54,2	58,7	61,6	64,3
Ուկրաինա	96,0	85,8	77,5	66,5	51,3	45,0	40,5	39,3	38,5	38,5	40,7	44,4	46,5
Հայաստան	92,6	81,8	47,6	43,4	45,7	48,9	51,8	53,5	57,4	59,3	62,9	68,9	77,8
Ադրբեջան	88,3	87,7	67,9	52,2	41,9	37,0	37,4	39,6	43,6	46,8	52,0	57,1	63,2
Վրաստան	87,6	69,6	38,4	28,6	25,4	26,0	28,7	31,8	32,7	33,7	34,4	35,9	37,9
Ղազախստան	99,6	88,6	83,9	76,1	66,5	61,1	61,4	62,4	61,3	62,9	69,1	78,2	85,6
Ղրղզստան	103,3	97,8	79,3	66,6	53,2	50,3	53,9	59,2	60,5	62,7	65,9	69,4	69,1
Տաջիկստան	98,4	91,4	64,9	57,8	46,8	41,0	39,2	39,9	42,0	43,5	47,1	52,0	56,7
Թուրքմենստան	102,0	97,2	92,1	82,8	68,5	63,6	59,3	52,6	55,3	64,1	75,4	84,4	88,7
Ուզբեկստան	101,6	101,1	89,9	87,8	84,1	83,4	84,7	86,8	90,6	94,3	98,1	102,5	106,8

Ծանոթություն.- մուգ գույնով նշված են ՀԱԱ ամենամեծ զումարային անկման տարիները:

ԱՊՀ երկրների շարքում նույնպես կան այնպիսիները, որոնցում թեև տեղի ունեցավ խոր «ադապտացիոն» անկում, մասամբ նաև ոչ տնտեսական գործոնների (օրինակ, ռազմական բախումների) ազդեցության շնորհիվ, սակայն դրանք Ռուսաստանից, Ուկրաինայից կամ Մոլդովայից ավելի շուտ կարողացան ապահովել ՀԱԱ առաջանցիկ աճ: Ամենավառ օրինակը Հայաստանն է, որը 1990-ականների սկզբին ընդգրկված էր ռազմական հակամարտության մեջ և որտեղ չորս տարիների ընթացքում (1989-1993թթ.) տեղի ունեցավ ՀԱԱ անկում 56,6%-ով: Սակայն 1994 թվականից սկսվեց տնտեսական աճը, որը շարունակվում է ներկայումս և որի տեմպերը համադրելի են 2000-2003թթ. ռուսական կամ ուկրաինական աճի տեմպերի հետ:

Վերափոխումների ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս.

- ԱՊՀ բոլոր երկրների տնտեսությունները հաստատապես աճում են,
- երկրներից շատերում աճը տեղի է ունենում վերջին հինգ կամ վեց տարիների ընթացքում, իսկ Հայաստանում՝ սկսած 1994թ.,

[1] http//www.chass.utoronto.ca/datalib/codebooks/utm/transmonee/, (2003):

- աճի տեմպերն ավելի բարձր են, քան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կամ Եվրամիության երկրներում (Ռուսաստանը, վերջին հինգ տարիների ընթացքում ապահովելով միջին հաշվով 6.7% տնտեսական աճ, ԱՊՀ երկրների շարքում գտնվում է վերջին տեղերում) [4]:

Թեև վերափոխումների արդյունքում ապահովվել է տնտեսական աճ, սակայն աճի իրական պատկերը բացահայտելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. որքանո՞վ է ՀՆԱ-ն ավելացել «սկզբնակետից» և ի՞նչ փոփոխություն է տեղի ունեցել մեկ շնչի հաշվով ՀՆԱ մեծության մեջ,
2. որքանո՞վ է երկրի տնտեսական աճը պայմանավորված ապրանքների և ծառայությունների միջազգային գների աճով,
3. աղքատության մակարդակի ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել տվյալ երկրներում:

Այսպես, 2003թ. Ռուսաստանի ՀՆԱ-ն կազմում էր 1990թ. ՀՆԱ 76%-ը, Ուկրաինայում նույն ցուցանիշը կազմում էր 55%, Վրաստանում՝ 46%, իսկ Մոլդովայում՝ 43%: Մինչդեռ, Լեհաստանը 2003թ. կարողացավ ապահովել 1989թ. ՀՆԱ 133%-ի չափով արդյունք, Հունգարիան՝ 119%, իսկ Էստոնիան՝ 102%:

Մեծ է առանձին երկրների տնտեսությունների կախվածությունը ապրանքների միջազգային գներից, հիմնականում՝ մեկ ապրանքի գնից, որի արդյունքում տնտեսական աճի ապահովման ռիսկ գոյություն ունի տվյալ ապրանքի գնի փոփոխության (իջեցման) ժամանակ: Նման երկրների շարքում են Ռուսաստանն ու Ադրբեջանը, որոնց տնտեսությունները կախված են էներգակիրներից, Ուկրաինան, որի տնտեսությունը կախվածության մեջ է մետաղագործությունից, Հայաստանը՝ ադամանդի մշակումից, Ղրղզստանը՝ ոսկու գներից: Այսպես, 2003թ. արտահանման ամբողջ ծավալում մետաղագործության արտադրանքի արտահանման ծավալը Ուկրաինայում կազմել է 37%, Ադրբեջանում նավթի և գազի արտահանման ծավալը կազմել է արտահանման ամբողջ ծավալի 70%-ը, իսկ Ռուսաստանում՝ 55%-ը: Նավթի և գազի արդյունահանման ծավալներից Ռուսաստանի տնտեսության կախվածության մասին են վկայում նաև այն տվյալները, որ էներգիայի արտադրությունը կազմում է ՀՆԱ 17-25%-ը, սակայն այս ոլորտում ապահովվում է զբաղվածության միայն 1%-ը: Մինչդեռ, սկսած 2000թ. Ռուսաստանի տարեկան աճի շուրջ 3 տոկոսային կետն ապահովվում է էներգակիրների բարձր գների հաշվին:

Մեր նշած հաջորդ գործոնը, որին պետք է ուշադրություն դարձնել

տնտեսական աճի մասին եզրակացություններ կատարելիս, աղքատության մակարդակի նվազումն է: Այս ցուցանիշը բարձր է ԱՊՀ երկրներում, թեև կայուն տնտեսական աճի պայմաններում այն վերջին տարիներին որոշ չափով նվազել է:

Հետհամայնավարական երկրներում շուկայական բարեփոխումներին համընթաց մեծացավ հասարակության տարբեր խավերի միջև անհավասարությունը: Եկամուտների անհավասարության գործակիցը խորհրդային ժամանակաշրջանում կազմում էր 0,23-0,26, որը համընկնում էր Հյուսիսային Եվրոպայի երկրների ցուցանիշի հետ: Կտրուկ մեծացան հասարակության բևեռացումը և եկամուտների անհավասարությունը, ինչն ավելի «այլանդակ» տեսք ստացավ բարեփոխումների դանդաղ ընթացքի պայմաններում և շատ երկրներում այժմ էլ բարձր է մնում: Համեմատության համար նշենք, որ ներկայումս Ռուսաստանում այն կազմում է 0,47, իսկ Հունգարիայում, որտեղ բարեփոխումներն ավելի վաղ սկսվեցին և արագ տեմպով ընթացան, անհավասարության գործակիցը կազմում է 0,25: Անցումային տնտեսությամբ մի շարք երկրներում եկամուտների անհավասարության ցուցանիշները Լատինական Ամերիկայի երկրների վատագույն ցուցանիշների մակարդակին են:

Անցումային տնտեսությունների համար խիստ արդիական խնդիր է աղքատության նվազեցմանն ուղղված միջոցների կիրառումը: Կայուն և հաստատուն տնտեսական աճի պայմաններում աղքատության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնախնդիրները.

- ուղղել (փոփոխել) գործարարության խեղաթյուրված կառուցվածքն այնպես, որպեսզի հնարավոր լինի բնակչության մեծ մասի համար աշխատանքի հնարավորություն ստեղծել՝ «ներքևից վերև բարձրանալու» սկզբունքով: Նման աշխատատեղերը հիմնականում կարող են ապահովվել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հաշվին,
- սոցիալական բարեկեցության համակարգն անհրաժեշտ է համապատասխանեցնել ֆինանսական միջոցների հայթայթման ժամանակակից աղբյուրներին՝ միևնույն ժամանակ պահպանելով հարկերի ցածր տոկոսադրույքները,
- անհրաժեշտ է վերացնել «մարդկային կապիտալի» ոլորտում ստեղծված խոր ճգնաժամը:

Սոցիալական բարեկեցության և հանրային ծառայությունների ժառանգված համակարգը ԱՊՀ երկրներում շարունակում է մնալ խիստ անարդյունավետ, քանի որ հսկայական ներդրումներ է պահանջում, մասնավորապես.

- ՀՆԱ անկումը շուրջ տասն անգամ կրճատեց հանրային ծախսումները, անգամ այն դեպքերում, երբ պահպանվեցին տոկոսային համամասնությունները,
- մեքենայություններն ու կաշառակերությունը համատարած և բնորոշ են բոլոր երկրներին, այդ պատճառով էլ շահառուները չեն ստանում իրենց հասանելիք գումարներն ու ծառայությունների դիմաց վճարները,
- սովորաբար «անվճար» ծառայությունները՝ կրթությունը, առողջապահությունը, միայն հարուստների համար դառնալու միտում ունեն,
- սոցիալական ապահովության վճարները (նպաստները) միշտ չէ, որ նպատակային են տրամադրվում և չեն ծածկում իրական կարիքները:

Այսպես, Ռուսաստանի ամենաաղքատ բնակչությունը (որը կազմում է բնակչության 20%-ը) ստանում է իրականացվող սոցիալական ապահովության երեք հիմնական ծրագրերի միջոցների միայն մեկ հինգերորդ մասը: Պարզ է, որ այս ցուցանիշը պետք է ավելի բարձր լինի: Միայն վերջերս օրենք ընդունվեց և ներկայումս ընթացքի մեջ է բնակչությանը բնաիրային տեսքով տրամադրվող օգնությունը «փողային» դարձնելու գործընթացը: Բնակչության ամենաաղքատ 10%-ին հատկացվում էր միջոցների 4%-ը, իսկ ամենահարուստ 10%-ին՝ 20%-ը: Նման պատկերը կարելի է անվանել «բարեկեցություն հարուստների համար»:

Սոցիալական ապահովության համակարգը մատչելի և արդյունավետ դարձնելու ճանապարհին, հատկապես սահմանված սուղ բյուջեի և հարկերի ցածր տոկոսադրույքների քաղաքականության կիրառման պարագայում, անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ առաջնային քայլերը.

- իրականում աղքատ բնակչությանը նպատակաուղղել սոցիալական ծրագրերի միջոցները,
- վճարունակ բնակչության համար սահմանել ծառայություններից օգտվելու գներ՝ դրանք դուրս բերելով ստվերային շրջանառությունից և դրանց տալով պաշտոնական բնույթ,
- նվազեցնել անձնակազմի թվաքանակը՝ բարձրացնելով մասնագիտական պատրաստվածությունն ու ավելացնելով նրանց աշխատավարձերը:

Մարդկային կապիտալի ճգնաժամը ԱՊՀ երկրներին բնորոշ հիմնախնդիրներից է: Թեև ներկայումս բոլոր անցումային երկրներում տեղի է ունենում տնտեսական աճ, սակայն այն դեռևս չի լուծում հանրային առողջապահության ոլորտում շարունակվող անկման, կյանքի տևողության նվազման, հիվանդացության մակարդակի բարձրացման հիմնախնդիրնե-

րը: Եթե աճի շնորհիվ բնակչության եկամուտները հետզհետե վերականգնվում են, ապա նույնը չի կարելի ասել սոցիալական ծառայությունների մասին, դրանք շարունակում են մնալ ցածր մակարդակի վրա մնալ և չեն բավարարում բնակչության պահանջմունքները: Իր հերթին, աղքատ բնակչության մեծ տեսակարար կշիռը բացասական ազդեցություն է թողնում սոցիալական ծառայությունների անբավարար ծավալի վրա:

Մարդկային կապիտալի ճգնաժամն արտահայտող ցուցանիշներից մեկը՝ կյանքի սպասվող տևողությունը: ԱՊՀ երկրներում բարեփոխումների ժամանակաշրջանում նվազել է: 2002թ., 1989թ. համեմատ, Ղազախստանում, օրինակ, այն նվազել է 7, Ռուսաստանում՝ 4, իսկ Ուզբեկստանում՝ 2 տարով: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում համանման ցուցանիշն աճել է, մասնավորապես, Լեհաստանում և Հունգարիայում նույն ժամանակահատվածում՝ 3-ական տարով:

Յուրի Լևադայի վերլուծական կենտրոնը հրապարակել է «Որքանով է արդարացված սոցիալական անհավասարությունը տարբեր երկրների քաղաքացիների տեսանկյունից» թեմայով հետազոտության արդյունքները: Հարցերի առաջին խումբը վերաբերում է աղքատների և հարուստների միջև գոյություն ունեցող հակակրանքին: Այսպես, նորվեգացիները, չեխերը և ճապոնացիները գտնում են, որ այդ հակակրանքը աննշան է: Իսկ հունգարացիները, ռուսաստանցիները և լատիշները գնահատում են այն որպես չափազանց բարձր: Բացի այդ, արևմտյան երկրների և Ճապոնիայի ներկայացուցիչները համոզված են, որ եկամուտների միջև տարբերությունը ուղղակիորեն անհրաժեշտ է պետության բարգավաճման համար: Արևելյան Եվրոպայում (Սլովենիա, Հունգարիա, Բուլղարիա) և Ռուսաստանում հակառակ կարծիքի են:

Ռուսաստանցիներն առաջինն են այն ազգերի ցուցակում, որոնք համոզված են, որ իրենց աշխատանքը չի գնահատվում բավականաչափ բարձր: Այդպես է կարծում հարցվածների 45%-ը: Նման գնահատականին մոտ են նաև լեհերը (37%): Հակառակ կարծիք ունեն նորվեգացիները, բրիտանացիները, չեխերը և գերմանացիները (12%): Ամենամեծ քաղաքացիների խումբը, որոնք գտնում են, որ եկամուտների միջև տարբերությունը պետք է վերացնի պետությունը, ռուսաստանցիներն են՝ 59%, ամենափոքրը՝ ԱՄՆ և Գերմանիայի քաղաքացիները (10-12%):

4. Աղքատությունը և անհավասարությունը ՀՀ-ում

Բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը և շերտավորման աճը տնտեսական վերափոխումների ուղեկից դարձան բոլոր հետհամայնավարական երկրներում. մի բևեռում հայտնվեց սեփականության վերա-

փոխումների արդյունքում ի հայտ եկած նոր սեփականատերերի խավը, մյուս բևեռում՝ աղքատացած բնակչությունը: Պետք է նշել, որ նման անցումային գծերը բնորոշ են սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր կողմերին, այդ թվում՝ բաշխման հարաբերություններին և բնակչության կենսամակարդակի շերտավորմանը: Բաշխման համակարգում տեղի ունեցած հիմնական փոփոխություններից կարելի է համարել գործունեության նոր տեսակի և նոր ոլորտների ծագումը, եկամուտների հնարավոր նոր աղբյուրների և կառուցվածքի ձևավորումը, գործատուների և վարձու աշխատողների միջև նոր հարաբերությունների ի հայտ գալը և այլն:

Ջինիի գործակցի միջին ցուցանիշը հետհամայնավարական երկրների համար մինչև վերափոխումների սկիզբը գրանցված 0,20-0,26-ից դարձել է միջին հաշվով 0,34 [5]: Սակայն ըստ երկրների և տարածաշրջանների բնակչության եկամուտներում եղած իրական տարբերությունները շատ անհավասարաչափ են բաշխված և փաստացի ցուցանիշներից ավելի բարձր են, քանի որ տնային տնտեսությունների ընտանեկան բյուջեների վիճակագրության հետազոտություններում լրիվ չեն ներառվում մի կողմից՝ «նոր հարուստները», մյուս կողմից՝ «սոցիալական հատակը» կազմող բնակչության խմբերը:

Բնակչության կենսամակարդակի շերտավորման աճին նպաստեցին բազմաթիվ գործոններ, որոնցից են.

1. Սեփականության վերափոխման գործընթացը: Այն իրականացվեց բնակչության անհավասար ելակետային հնարավորությունների պայմաններում[1], որտեղ էական դեր խաղաց նախկին համակարգում բնակչության արդեն ձևավորված սոցիալական շերտավորումը՝ անհրաժեշտ տեղեկատվության և ֆինանսական միջոցների մենաշնորհացման տեսանկյունից:
2. Անկատար մրցակցությունը: Անհավասար է բաշխված ոչ միայն նյութական, այլ նաև մարդկային կապիտալը, որն ավելի է խորանում կրթական համակարգի վճարովի դառնալով: Օրենսդրության անկատարության պատճառով հարկային դաշտում տնտեսավարող սուբյեկտները գործում են անհավասար պայմաններում, բարձր է կոռուպցիայի մակարդակը, հատկապես երկարաժամկետ վարկերը մատչելի չեն փոքր և միջին գործարարության համար, որն այսօր գերակայում է Հայաստանի տնտեսությունում:
3. Տնտեսության անկումը և սղաճը, լրավճարների վերացումը, սոցիա-

[1] Թեև բազմաթիվ երկրներում զանգվածային մասնավորեցումն ուղեկցվեց սեփականաշնորհման սերտիֆիկատների, վաուչերների բաշխմամբ, սակայն հետազոտությունները վկայում են, որ այդ ծրագրերի սոցիալ-քաղաքական արդյունավետությունը բավականին ցածր է եղել նաև այն պատճառով, որ դրանք ավելի են խորացրել հասարակության բևեռացումը:

լական ծախսերի կրճատումը, ֆիզիկական անձանց վրա ընկնող հարկային բեռի ուժեղացումը, որոնք հանգեցրին բնակչության մի ստվար հատվածի իրական եկամուտների նվազեցմանը:

4. Աշխատավարձի դեցիլային գործակցի աճը, վարձու աշխատողների և սեփականատերերի եկամուտների միջև, նաև գործարարների եկամուտների միջև խզման խորացումը:
5. Շուկայական պայմաններին բնակչության դանդաղ հարմարվելը, պլանային տնտեսությունից ժառանգություն մնացած պետության հանդեպ խնամառուական հոգեբանությունը:

Անցումային տնտեսությամբ երկրներում այսօր ձևավորված կենսամակարդակի շերտավորումը մի շարք առանձնահատկություններով տարբերվում է ինչպես պլանային, այնպես էլ շուկայական տնտեսությամբ երկրների կենսամակարդակի շերտավորումից: *Նախ, ի թիվս սոցիալապես խոցելի խմբերի՝ ստորին դեցիլներում են հայտնվել տնտեսապես ակտիվ և բարձրորակ մասնագետները:* Նրանց ցածր եկամուտներն այսօր պայմանավորված են ոչ մեծ աշխատավարձով, լրիվ գործազրկությամբ կամ մասնակի զբաղվածությամբ, աշխատավարձի կամ կենսաթոշակների վճարումների ուշացումով:

Երկրորդ՝ աշխատողների մեծ մասի աշխատավարձը չի կատարում ոչ վերարտադրողական, ոչ էլ խթանող գործառույթ: ՀՀ-ում, օրինակ, չնայած աշխատատեղերի առկայությանը, շատ մարդիկ խուսափում են գործի անցնել՝ աշխատուժի գերշահագործման և աշխատավարձի ցածր չափերի պատճառով (5000-10000 դրամ), աղքատ է զբաղված բնակչության 45-47%-ը:

Երրորդ՝ կենսամակարդակի շերտավորումը նվազեցնելու գործում տնտեսական աճը էական դեր չի խաղում: Նրա պտուղներից հիմնականում օգտվում է ամենահարուստ 5-10%-ը (ավելին, ՀՀ-ում 2001թ. գրանցվել է կենսամակարդակի շերտավորման կրճատում):

Չորրորդ՝ վերափոխումների ընթացքում նախկին վարչակազմն իր քաղաքական և բյուրոկրատական ռեսուրսները փոխանակեց տնտեսական ռեսուրսների հետ, ինչը, նպաստելով ունևոր խավի կողմից կապիտալի կուտակմանը, պայմաններ պետք է ստեղծեր տնտեսական աճի համար: Այնուհանդերձ, հարուստների մեծ մասը խուսափում է իր կուտակումները երկրի ներսում արտադրական կապիտալի վերածելուց:

Աղքատության և անհավասարության առկա վիճակը ձևավորում է մի շարք սպառնալիքներ, որոնք կարող են հանգեցնել հետևյալ հնարավոր հետևանքներին.

- Հասարակության բևեռացման առկա վիճակի շարունակականությունը

սպառնում է խորացնել հասարակական շերտերի փոխադարձ օտարումը, որն, իր հերթին, վտանգում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու հզոր պետության կայացումը, քանի որ աստիճանաբար կորստի է մատնվում երկրի և հասարակության շահի գիտակցումը:

- Աղքատության մեծ չափերը խոչընդոտում են քաղաքացիական հասարակության և քաղաքացիական համաձայնության կայացմանը և, հետևաբար, իրավական և ժողովրդավարական պետության կայացմանը:
- Աղքատների բազմահազարանոց խավն ավելի ու ավելի հետ է մնում մարդկային զարգացման ընդհանուր օրինաչափություններից, որը կհանգեցնի երկրի ընդհանուր մարդկային կապիտալի որակազրկմանը:
- Աղքատության տարածվածության պայմաններում խիստ սահմանափակվում են քաղաքացիների ինքնահաստատման և ինքնաիրացման հնարավորությունները, ինչը նրանց առավել գործունյա մասին դրդում է արտագաղթի, իսկ վերջինիս ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական բացասական հետևանքներն արդեն իսկ ակներև են:
- Տևական աղքատացման գործընթացը հասարակության անդամների մեծամասնության մեջ արմատավորում է պասիվության, հոգեբանական ընկճվածության, նիհիլիզմի և հոռետեսական տրամադրություններ, որի հետևանքով պակասում են մոտիվացիան, նախաձեռնողականությունն ու մասնակցությունը երկրի հասարակական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքին [6]:

Այս ամենը, անկասկած, խարխլում է ազգային և տնտեսական անվտանգության հիմքերը: Եթե հաշվի առնենք, որ երկրի տնտեսական անվտանգության համաթվի հաշվարկման համար հիմք ընդունված տնտեսական անվտանգության 20 ցուցանիշներից 10-ն ուղղակիորեն կախված են երկրի բնակչության կենսամակարդակից, ապա պարզ կդառնա մեզանում այդ խնդրի սրությունը [7]:

4.1. Աղքատության ցուցանիշների դինամիկան

Անցումային շրջանում բնակչության կենսամակարդակի, աղքատության, դրա կառուցվածքի և պատճառների ուսումնասիրության նպատակով 1996-ից Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ Հայաստանում իրականացվել են տնային տնտեսությունների 5 հետազոտություններ: Այդուհանդերձ, նման հետազոտությունների համար կարևոր մի շարք տվյալներ պաշտոնական վիճակագրությամբ դեռևս չեն սահմանվում: Օրինակ, չեն սահմանվում Հայաստանում առկա տնային տնտեսությունների ընդհանուր թիվը, մեկ տնային տնտեսության հաշվով միջին ամսական եկամտի և ծախ-

սերի մեծությունները (տնային տնտեսության մեկ շնչին ընկնող միջին ամսական եկամուտները և ծախսերը սահմանվում են): Նշված տվյալները, մասնավորապես, անհրաժեշտ են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համախառն մատչելիությունն առավել ճշգրիտ որոշելու համար:

Պաշտոնական վիճակագրությունը տնային տնտեսություններին բաժանում է երեք խմբի՝ «շատ աղքատներ», «աղքատներ» և «ոչ աղքատներ»: Նյութական աղքատության գնահատման հիմքում ընկած են բացարձակ աղքատության գծի երկու չափանիշներ՝ «պարենային գիծը» և «աղքատության ընդհանուր գիծը»:

Աղքատության ընդհանուր գծի որոշման հիմքում ընկած են սպառողական զամբյուղի կառուցվածքն ու կազմը, որ ստացվել են իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքներով: Սպառողական զամբյուղի բաղկացուցիչ մասը կազմող նվազագույն պարենային զամբյուղը հիմնված է դրանում ընդգրկված մթերքների սննդարար արժեքների վրա և մեկ շնչի հաշվով օրական կազմում է 2100 կկալ: Նվազագույն սպառողական զամբյուղը կամ աղքատության ընդհանուր գիծը ստացվել է կառուցվածքայնորեն, այսինքն՝ զամբյուղի արժեքի 61,3%-ը կազմել է պարենային զամբյուղը, 38,7%-ը՝ արդյունաբերական ապրանքները և ծառայությունները:

Հայաստանում պետական սոցիալական քաղաքականությունը դիտարկում է տնային տնտեսությունը՝ որպես հասարակության այն նվազագույն սոցիալ-տնտեսական ամբողջությունը, որին պետք է ուղղվի պետական սոցիալական աջակցությունը, ուստի այս տեսանկյունով անհրաժեշտ է իմանալ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը: Մինչդեռ, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրն ուղղված է բարելավելու հասարակության յուրաքանչյուր անհատի կենսամակարդակը, և այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ երկրի բնակչության կազմում աղքատ բնակչության տեսակարար կշիռը:

Համաձայն 2003թ. տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության արդյունքների, աղքատության մակարդակը տնային տնտեսությունների կտրվածքով կազմել է 36,3%, իսկ բնակչության կտրվածքով՝ 42,9%: Տնային տնտեսությունների և բնակչության աղքատության մակարդակների միջև եղած տարբերությունը բացատրվում է նրանով, որ բազմանդամ տնային տնտեսություններն ավելի են հակված ցածր կենսամակարդակ ունենալու:

Տնային տնտեսության միջին չափն ըստ ընտրանքային համակցության կազմել է 4,14 մարդ (մշտական բնակչություն), քաղաքային բնակավայրերում՝ 4,05 մարդ և գյուղական բնակավայրերում՝ 4,29 մարդ: Աղքատության մակարդակը, կախված տնային տնտեսության չափից, ներկայաց-

ված է *Աղյուսակ 3-ում:*

Աղյուսակ 3

Տնային տնտեսության միջին չափը և աղքատության մակարդակն ըստ մշտական բնակչության [8, էջ 47]

Աղքատության մակարդակը	Տնային տնտեսության չափը (մարդ)	
	2002թ.	2003թ.
Ընդամենը այդ թվում՝	4.14	4.14
Ոչ աղքատներ	3.81	3.78
Աղքատներ	4.43	4.69
Շատ աղքատներ	4.94	5.29

Ըստ բարեկեցության մակարդակի երկրի բնակչությունը բաժանվել է երեք խմբերի:

Ոչ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը (սպառման ագրեգատը) մեկ շնչի հաշվով բարձր են կենսամակարդակը գնահատող նվազագույն մեծությունից (այստեղ՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից):

Աղքատ է համարվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են կենսամակարդակը գնահատող նվազագույն մեծությունից, սակայն բարձր են աղքատության պարենային գծից (այստեղ՝ նվազագույն պարենային զամբյուղի արժեքից):

Շատ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը (սպառողական ագրեգատը) մեկ շնչի հաշվով ցածր են աղքատության պարենային գծից:

Աղքատության կրճատումն իր բնույթով երկարատև գործընթաց է: Սակայն վերջին տարիներին մեծ թափ ստացած մակրոտնտեսական զարգացումներն արդեն սկսել են արտացոլվել նաև բնակչության ընդհանուր կենսամակարդակի փոփոխության վրա: Աղքատության մակարդակն առաջին անգամ նվազման միտում դրսևորեց 2001թ. հետազոտության արդյունքներով՝ աղքատության մակարդակը կազմեց 50,9%՝ 1998/1999թթ. հետազոտությամբ գնահատված 55,05%-ի համեմատ: 2002թ. հետազոտության արդյունքները ցույց տվեցին աղքատության մակարդակի անկում մինչև 49,7%, իսկ արդեն 2003թ. ընթացքում աղքատության մակարդակը բնակչության կտրվածքով նվազել է 6,8%-ային կետով՝ կազմելով 42,9%: Տնային տնտեսությունների կտրվածքով աղքատության մակարդակը նվազել է 7,7%-ային կետով և կազմել է 36,3 %:

Աղքատ բնակչության տոկոսի ցուցանիշը կենսամակարդակի գնահատման առավել հայտնի, հեշտ կիրառելի և դյուրին ըմբռնելի ցուցանիշ է:

Սակայն այն հաշվի չի առնում աղքատ տնային տնտեսությունների կամ բնակչության կենսամակարդակների միջև տարբերությունը: Այն ենթադրում է, որ բոլոր աղքատներն ունեն նույն կենսամակարդակը և զգայուն չէ աղքատության խորության նկատմամբ: Օրինակ, այն չի փոփոխվում, եթե աղքատության գծից ցածր կենսամակարդակ ունեցողներն ավելի աղքատանան կամ մի փոքր հարստանան, քանի դեռ նրանք շարունակում են մնալ աղքատության գծից ցածր մակարդակում: Աղքատության պատկերն առավել խոր գնահատելու համար հաշվարկվում են նաև աղքատության խորության և աղքատության սրության ցուցանիշները:

Աղքատության խորությունը ցույց է տալիս, թե որքան հեռու է գտնվում աղքատության գծից տնային տնտեսությունը (բնակչությունը): Այն արտացոլում է միջին սպառման ագրեգատի (կամ եկամտի) դեֆիցիտը աղքատության գծի նկատմամբ՝ ողջ բնակչության համար: Երբ այն հաշվարկվում է միայն աղքատ բնակչության համար, ապա ցույց է տալիս աղքատության դեֆիցիտը, այսինքն՝ որքան է կազմում աղքատ բնակչության միջին սպառման դեֆիցիտը աղքատության գծին հասնելու համար՝ տոկոսներով աղքատության գծի նկատմամբ: Այդ դեֆիցիտը բազմապատկելով աղքատ բնակչության թվաքանակով (որը սովորաբար արտահայտվում է որպես ՀՆԱ տոկոս)՝ ստանում ենք այն նվազագույն ծախսը, որն անհրաժեշտ է երկրում աղքատությունը հաղթահարելու համար՝ ենթադրելով սոցիալական աջակցության տրամադրման կատարյալ հասցեականություն:

Աղքատության սրությունը (միջին քառակուսային աղքատության խորություն) ցույց է տալիս աղքատ բնակչության միջև անհավասարությունը: Եթե սոցիալական աջակցությունն ուղղվում է աղքատներին՝ այս գործակիցը նվազում է, և հակառակը:

Աղքատների համամասնության, աղքատության խորության և սրության ցուցանիշները դասվում են Ֆոստեր-Գրիեր-Տորբեկե ցուցանիշների խմբին:

Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան հանրապետության կտրվածքով ներկայացված է *Աղյուսակ 4-ում:*

Ցուցանիշների դինամիկայից երևում է, որ շատ աղքատ բնակչության մակարդակը նվազում է առավել արագ տեմպերով: Սա կարելի է բացատրել երկու գործոնների ազդեցությամբ՝ դրական և բացասական: Որպես դրական գործոն կարելի է նշել պետության նպատակաուղղված սոցիալական քաղաքականությունը և վերջինիս հասցեականության բարելավումը: Բացասական գործոն է փաստացի պարենային զամբյուղի ցածր արժեքը, որը չի ապահովում մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ մակարդակը, սակայն հաշվարկների ժամանակ նման մոտեցումը հանգեց-

նում է շատ աղքատ բնակչության առավել արագ տեմպերով կրճատմանը:

Աղյուսակ 4

Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան (տոկոսներով) հանրապետությունում (ըստ բնակչության) [8, էջ 48]

	1996թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Ոչ աղքատ բնակչություն	45.3	44.95	49.1	50.3	57.1
Աղքատ բնակչություն	54.7	55.05	50.9	49.7	42.9
Շատ աղքատ բնակչություն	27.7	22.91	16.0	13.1	7.4
Աղքատության խորություն	21.5	19.0	15.1	13.5	8.9
Աղքատության սրություն	11.1	9.0	6.1	5.2	2.8

Եկամուտների կամ ծախսերի անհավասարաչափ բաշխման աստիճանը բնակչության տարբեր խավերի միջև որոշվում է Ջինիի գործակցով: Եկամուտների և ծախսերի վիճակագրական չափը տատանվում է 0-ից 1 միջակայքում և 0-ի դեպքում նշանակում է բնակչության բոլոր խմբերի եկամուտների և ծախսերի կատարյալ հավասարություն, իսկ 1-ի դեպքում՝ կատարյալ անհավասարություն:

Նկ. 1

Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան [8, էջ 49]



Համաձայն հետազոտության արդյունքների, Ջինիի գործակիցը 2003թ. ըստ ընթացիկ եկամուտների կազմել է 0,438, իսկ սպառողական ծախսերի՝ 0,334:

2003թ. Ջինիի գործակիցն ըստ եկամուտների (թե՛ ամբողջական և թե՛ ընթացիկ) որոշակի նվազել է: Սակայն անգամ այդ պարագայում նշված ցուցանիշների չափերը ցույց են տալիս, որ հասարակության մեջ բավական բարձր են անհավասարությունն ու բևեռացումը *(Աղյուսակ 5):*

Համեմատության համար *Աղյուսակ 6-ում* բերված են Ջինիի գործակցի արժեքները մի շարք եվրոպական երկրներում՝ ըստ ամենավերջին առկա տվյալների և գնահատման հիմքի:

Աղյուսակ 5

Բնակչության բնեռացվածության աստիճանն ըստ Ջինիի գործակցի [8, էջ 50]

Ջինիի գործակից	1996թ.	1999թ.	2001թ.	2002թ.	2003թ.
Ամբողջական եկամուտների կտրվածքով	0.653	0.570	0.528	0.449	0.434
Ընթացիկ եկամուտների կտրվածքով	0.602	0.593	0.535	0.451	0.438
Ըստ սպառման ծախսերի	0.444	0.372	0.375	0.354	0.334
Սպառողական ագրեգատի կտրվածքով	_*	_*	0.344	0.325	0.271

* Այս ցուցանիշը հաշվարկվել է միայն սկսած 2001թ.:

Աղյուսակ 6

Ջինիի գործակիցն Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում [8, էջ 51]

Երկիրը	Տարեթիվը	Գնահատման հիմքերը	Ջինիի գործակիցը
Հունգարիա	1999թ.	ըստ եկամուտների	0.26
Սլովենիա	1998թ.	ըստ եկամուտների	0.26
Բոսնիա	2001թ.	ըստ սպառման	0.27
Բելառուս	1999թ.	ըստ ծախսերի	0.30
Ուկրաինա	1999թ.	ըստ եկամուտների	0.30
Բուլղարիա	1999թ.	ըստ եկամուտների	0.33
Լիտվա	2000թ.	ըստ սպառման	0.33
Սերբիա	2002թ.	ըստ եկամուտների	0.33
Խորվաթիա	1998թ.	ըստ սպառման	0.36
Էստոնիա	2001թ.	ըստ եկամուտների	0.38
Ռուսաստան	2000թ.	ըստ եկամուտների	0.40
Հայաստան	2003թ.	ըստ ամբողջական եկամտի	0.43

4.2. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նպատակադրումները

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ԱՀՌԾ) համատեքստում բարձր տեմպերով հարատև տնտեսական աճի ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության արդյունավետ քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունքում նախատեսվում է աղքատ բնակչության թվաքանակը 2005 թ. կրճատել մինչև 41%, 2010թ.՝ մինչև 29,1% և 2015թ.՝ մինչև 19,6% (2001թ.՝ 50,9%): Միևնույն ժամանակ, շատ աղքատ բնակչության քվաքանակը 2005թ. կկազմի 14,2%, 2010թ.՝ 10,6%, իսկ 2015թ.՝ 4,1% (2001թ.՝ 16%):

Ինչ վերաբերում է աղքատության չափման միջազգայնորեն ընդուն-

ված ցուցանիշներին, այն է՝ մարդկանց թիվը, որոնք ապրում են օրական $1, 2 և 4-ից պակաս գումարով[1], ապա 2005թ. նրանք համապատասխանաբար կկազմեն ընդհանուր բնակչության 13,8, 35,9 և 68,3%-ը, 2010թ.՝ 4, 20,5 և 42,1%-ը, իսկ 2015 թ.՝ 2,7, 6,8 և 27,6%-ը (2001թ. 29,4, 58,6 և 81,5%):

Աղքատության նմանօրինակ կրճատումը հիմնականում պայմանավորված կլինի աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների և սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակներ և նպաստներ) առաջանցիկ աճով: Աղքատության կրճատման հիմնական ցուցանիշները ներկայացված են *Աղյուսակ 7-ում:*

Աղյուսակ 7

ԱՀՌԾ աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները [6, Աղյուսակ 3.1]

Ցուցանիշներ	2001	2003	2004	2006	2009	2012	2015
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, հազար դրամ [1]	391.5	489.1	532.8	631.5	808.3	1005.7	1244.2
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, ԱՄՆ դոլար [1]	704.8	834.2	904.2	1061.0	1338.0	1639.9	1998.6
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով, PPP ԱՄՆ դոլար [2]	2 382.1	2 819.5	3 056.2	3 586.1	4 522.3	5 542.8	6 755.4
Աղքատների թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	50.9	46.2	43.7	37.9	30.8	26.3	19.7
այդ թվում՝ շատ աղքատների թվաքանակը, %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	*16.0*	*15.2*	*14.7*	*13.5*	*11.4*	*8.6*	*4.1*
Օրական $1-ից պակաս եկամուտ ունեցող բնակչության թվաքանակը[3], %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	29.4	23.7	17.9	10.0	4.3	3.4	2.7
Օրական $2-ից պակաս եկամուտ ունեցող բնակչության թվաքանակը[3], % բնակչության թվաքանակի նկատմամբ	58.6	52.0	43.4	31.9	24.3	14.1	6.8
Օրական $4-ից պակաս եկամուտ ունեցող բնակչության թվաքանակը[3], %՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	81.5	76.6	72.8	64.0	52.5	33.5	27.6
Պակաս քաշ ունեցող երեխաների թվաքանակը, %՝ մինչև 5 տարեկան երեխաների ընդհանուր թվաքանակի նկատմամբ	3.0 (2000թ.)	2.9	2.8	2.7	2.3	1.8	1.4
Պակաս հասակ ունեցող երեխաների թվաքանակը, %՝ մինչև 5 տարեկան երեխաների ընդհանուր թվաքանակի նկատմամբ	13.0 (2000թ.)	12.5	12.0	11.5	9.5	8.0	6.0
Հուշագրային հոդված							
Առկա բնակչության թվաքանակը [4], հազար մարդ	*3 002.6*	*3 013.8*	*3 020.5*	*3 038.1*	*3 074.2*	*3 125.7*	*3 196.0*

[1] Հաշվարկվել է՝ հիմք ընդունելով առկա բնակչության թվաքանակը:
[2] *PPP*-ն ամբողջ ժամանակահատվածի համար ընդունված է 3.38:
[3] ԱՄՆ *PPP* դոլարներով հաշվարկված աղքատության ցուցանիշները հիմնված են բնակչության եկամուտների կանխատեսումների վրա:
[4] 2001թ. ցուցանիշը՝ 2001թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ: Կանխատեսումներում հաշվի չի առնված միգրացիան:

Նախատեսվում է, որ անհավասարությունը կանխատեսվող ժամա-

[1] Նշված գումարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով Հայաստանում ԱՄՆ դոլարի գնողունակության հարաբերակցությունը (PPP), որը 2001թ. հավասար է եղել 3,38 և նախատեսվում է, որ 2002-2015թթ. ժամանակահատվածում կմնա անփոփոխ՝ պահպանելով 2001թ. մակարդակը: 3,38 PPP-ն նշանակում է, որ Հայաստանում $1 իր գնողունակությամբ համապատասխանում է $3,38-ին ԱՄՆ-ում:

նակաշրջանում նույնպես կկրճատվի: Եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը 2005թ. կկազմի 0.491, 2010թ.՝ 0.466 և 2015թ.՝ 0.446 (2001թ.՝ 0.535):

Անհավասարության կրճատումը հիմնականում պայմանավորված կլինի պետության կողմից իրականացվող եկամտային քաղաքականության արդյունքում (նվազագույն աշխատավարձի համապատասխանեցումը աղքատության պարենային զծին և սոցիալական ենթակառուցվածքներում ու պետական կառավարման ոլորտում զբաղվածների աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճի ապահովումը) աշխատանքային եկամուտների անհավասարության կրճատմամբ, ինչպես նաև կենսաթոշակների առաջանցիկ աճով և պետական նպաստների նպատակայնության աստիճանի էական բարձրացմամբ:

Բնակչության եկամուտների անհավասարության կրճատմանը վերաբերող հիմնական նպատակային ցուցանիշները ներկայացված են *Աղյուսակ 8-ում:*

Աղյուսակ 8

ԱՀՌԾ անհավասարության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները [6, Աղյուսակ 3.2]

Ցուցանիշներ	2001	2003	2004	2006	2009	2012	2015
Եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը	0.535	0.510	0.498	0.483	0.469	0.458	0.446
այդ թվում՝ աշխատանքային եկամուտների համար	*0.446*	*0.443*	*0.441*	*0.438*	*0.433*	*0.428*	*0.423*
սոցիալական տրանսֆերտների համար	*0.161*	*0.074*	*0.068*	*0.076*	*0.086*	*0.082*	*0.080*
20% ամենաաղքատ բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	55.4	85.0	101.4	140.3	192.3	242.7	311.0
2-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	120.1	159.4	184.8	239.7	339.2	453.1	603.5
3-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	195.4	242.0	278.5	359.1	510.9	681.1	903.3
4-րդ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	318.3	361.9	408.7	526.2	834.6	1102.2	1443.1
Ամենահարուստ 20% բնակչության տարեկան եկամուտները, հազար դրամ	945.5	1235.6	1362.9	1668.7	2207.5	2751.6	3416.9
Ամենաաղքատ բնակչության եկամուտները, %՝ ամենահարուստների եկամուտների նկատմամբ	5.9	6.9	7.4	8.4	8.7	8.8	9.1

Ինչպես ցույց է տրված ԱՀՌԾ աղքատության վերլուծության բաժնում, մարդկային աղքատության մակարդակը Հայաստանում ներկայումս էականորեն ավելի ցածր է, քան նյութական աղքատությանը, և մարդկային զարգացումը համեմատելի է տնտեսապես շատ ավելի զարգացած և հարուստ երկրների հետ: Այդ առումով, մարդկային զարգացման ներուժի պահպանումը և հետագա ուժեղացումը, ինչպես նաև մարդկային աղքատության

ներկայումս սրվող դրսևորումների էական կրճատումը ԱՀՌԾ հիմնական գերակայություններից են:

Նշված գերակայությունների իրականացումը պայմանավորված կլինի երկու հիմնական գործոնների ազդեցությամբ՝ համապատասխան համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներով և պետական ֆինանսավորման ծավալների ավելացմամբ:

4.3. Աղքատության և անհավասարության հաղթահարման ուղիները

Աղքատության հաղթահարման տեսակետից բացարձակ գերակայություն է հանդիսանում կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը: Ինչպես վկայում է վերլուծությունը, տնտեսական աճն այն հիմնական գործոնն է, որը 1999-2001թթ. պայմանավորել է աղքատ բնակչության եկամուտների աճի 58,1%-ը: Ի տարբերություն տարածված տեսակետների, տնտեսական աճը Հայաստանում 1996-2002թթ. եղել է աղքատության կրճատմանը նպաստող, չնայած տնտեսական աճի արդյունքում էականորեն կրճատվել են վարձու աշխատատեղերը, այնուամենայնիվ, այդ կրճատումները փոխհատուցվել են ինքնազբաղվածության էական աճով, ինչպես նաև վարձու աշխատողների և ինքնազբաղվածների եկամուտների առաջանցիկ աճով: Տնտեսական աճի խրախուսման քաղաքականության՝ աղքատության կրճատման հետ կապված հիմնական ուղղությունները կհանդիսանան ինքնազբաղվածության և փոքր բիզնեսի խրախուսումն ու գործարար միջավայրի բարելավումը, որոնց արդյունքում պետք է շարունակվի աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճը:

Աղյուսակ 9-ի տվյալները վկայում են, որ ներկայումս բնակչության դրամական եկամուտների գերակշռող մասը կազմում են աշխատանքի արդյունքում ստացվող եկամուտները [9]: Միևնույն ժամանակ, 1999-2003թթ. ընթացքում աննշան են աճել սեփականությունից ստացվող եկամուտները, իսկ գյուղմթերքի, անասունների վաճառքից ստացվող եկամուտները կտրուկ նվազել են:

Ներկայացվող աղյուսակի տվյալներից երևում է, որ դեռևս մեծ է բնակչության կախվածությունը հանրապետությունից դուրս ապրող բարեկամներից, ընդ որում, եթե 1999թ. ընդամենը դրամական եկամուտներում Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող եկամուտը կազմում էր 12,8%, ապա 2002թ.՝ 15,2%, 2003թ.՝ 13,8%: Նշված ժամանակահատվածում աճել են նաև ինքնազբաղվածության արդյունքում ապահովվող եկամուտները (տե՛ս *Աղյուսակ 10*):

Աղյուսակ 9

ՀՀ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտը 1999-2003թթ.
(ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ) [8, էջ 129] և [9, էջ 51]

Ցուցանիշը	Ընդամենը				այդ թվում							
					քաղաքային բնակավայր				գյուղական բնակավայր			
	1999[1]	2001[1]	2002[1]	2003[1]	1999	2001	2002	2003	1999	2001	2002	2003
1. Դրամական եկամուտներ, այդ թվում՝	7929	11217	9781	13324	7397	10913	11656	15647	8636	11843	7027	9960
Եկամուտներ աշխատանքից, որից	2790	4748	5204	7355	3610	5734	7060	10424	1699	2722	2478	2911
աշխատավարձ	1948	3431	3718	5487	2814	4295	4983	7985	796	1655	1860	1870
թոշակներ	522	770	865	1024	608	812	832	937	406	686	913	1150
կրթաթոշակներ	17	19	16	16	26	26	23	27	5	6	5	1
նպաստներ	183	273	239	263	236	284	275	245	112	252	187	290
արտոնությունների դիմաց փոխատվություններ	-	16	8	18	-	23	8	27	-	-	8	6
Եկամուտներ սեփականությունից (տոկոսներ, շահաբաժիններ և այլն)	7	95	12	25	12	53	10	21	-	182	14	32
Եկամուտներ անշարժ գույքի վաճառքից	284	45	100	36	497	24	164	5	0.0	89	7	81
Եկամուտներ գյուղմթերքի, անասունի և այլնի վաճառքից	2546	1754	626	1691	165	105	147	628	5715	5144	1329	3232
Այլ եկամուտներ	1580	3513	2719	2896	2243	3875	3145	3333	699	2762	2094	2257
2. Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում՝	2832	2616	2995	2373	1368	1650	1603	1006	4780	4600	5040	4353
Սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	2652	2483	2803	2195	1155	1477	1431	755	4643	4551	4819	4281
Անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	180	133	192	178	213	173	172	251	137	49	221	72
Ամբողջական եկամուտ	10761	13833	12776	15697	8765	12563	13259	16653	13416	16443	12067	14313

[1] Ներառյալ եկամուտը ցույց չտված տնային տնտեսությունները:

Աղյուսակ 10

ՀՀ տնային տնտեսությունների ընթացիկ դրամական եկամուտներն ըստ եկամտի հիմնական աղբյուրների՝ 1999-2003թթ. և եկամուտների կառուցվածքում եկամտի հիմնական աղբյուրների մասնաբաժինը (ամսական միջինը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով, դրամ, %) [9, էջ 33-34, 53-54] և [10, էջ 39]

Ցուցանիշը	Ընդամենը				այդ թվում							
					քաղաքային բնակավայր				գյուղական բնակավայր			
	1999[1]	2001[1]	2002[1]	2003[1]	1999	2001	2002	2003	1999	2001	2002	2003
Ընդամենը դրամական եկամուտը, այդ թվում՝	7929	11217	9781	13324	7397	10913	11656	15647	8636	11843	7027	9960
աշխատավարձ	1948	3431	3718	5487	2814	4295	4983	7985	796	1655	1860	1870
ինքնազբաղվածություն	842	1317	1486	1868	796	1439	2077	2439	903	1067	618	1041
գյուղմթերքի և անասունի վաճառք	2546	1754	626	1691	165	105	147	628	5715	5144	1329	3232
սեփականություն (վարձակալում, տոկոսներ, շահաբաժիններ)	7	95	12	25	12	53	10	21	-	182	14	32
պետական թոշակներ և նպաստներ	740	1078	1128	1321	894	1145	1138	1236	532	944	1113	1447
Տրանսֆերտներ, դրանցից՝	1532	2081	1829	2113	2285	2110	1984	2325	529	2020	1601	1807
Հայաստանում ապրող բարեկամներից	477	325	326	267	652	379	384	346	245	213	241	152
Հայաստանից դուրս ապրող	1017	1705	1487	1840	1590	1714	1587	1974	255	1686	1340	1645
Այլ եկամուտներ	314	1461	982	819	431	1766	1317	1013	161	831	492	531
տոկոսներով												
Ընդամենը դրամական եկամուտը, այդ թվում՝	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
վարձու աշխատանք	24.6	30.6	38.0	41.2	38.0	39.4	42.7	51.0	9.2	14.0	26.5	18.8
ինքնազբաղվածություն	10.6	11.7	15.2	14.0	10.8	13.2	17.8	15.6	10.4	9.0	8.8	10.5
գյուղմթերքի և անասունի վաճառք	32.1	15.6	6.4	12.7	2.2	1.0	1.3	4.0	66.2	43.4	18.9	32.5
սեփականություն (վարձակալում, տոկոսներ, շահաբաժիններ)	0.1	0.9	0.1	0.2	0.2	0.5	0.1	0.1	-	1.5	0.2	0.3
պետական թոշակներ և նպաստներ	9.3	9.6	11.5	9.9	12.1	10.4	9.8	7.9	6.2	8.0	15.8	14.5
Տրանսֆերտներ, դրանցից՝	19.3	18.5	18.7	15.9	30.9	19.2	17.0	14.9	6.1	17.1	22.8	18.1
Հայաստանում ապրող բարեկամներից	6.0	2.9	3.3	2.0	8.8	3.5	3.3	2.2	2.8	1.8	3.4	1.5
Հայաստանից դուրս ապրող	12.8	15.2	15.2	13.9	21.5	15.7	13.6	12.7	3.0	14.2	19.1	16.6
Այլ եկամուտներ	4.0	13.1	10.1	6.1	5.8	16.3	11.3	6.5	1.9	7.0	7.0	5.3

[1] Ներառյալ եկամուտը ցույց չտված տնային տնտեսությունները:

Եզրակացություն

Հանրապետության բնակչության աղքատության հաղթահարման և եկամուտների բաշխման անհավասարության վերացման գործում սոցիալական քաղաքականության հիմնական գերակայությունները հետևյալն են՝

- սոցիալական օժանդակության ոլորտում՝ ընտանեկան նպաստների նպատակայնության աճի ապահովումը և ամենաաղքատ բնակչության՝ հնարավորինս առավելագույն ներգրավումը համակարգի մեջ, ընտանեկան նպաստների չափերի ավելացումն այն հաշվարկով, որ հնարավոր լինի գերազանցել պարենային աղքատության գիծը,
- սոցիալական ապահովագրության ոլորտում՝ արդյունավետության աճը, ապահովագրական բնույթ չկրող կենսաթոշակների վճարման տեղափոխումը պետական բյուջե, կենսաթոշակների չափերի աճն այն հաշվարկով, որ դրանք գերազանցեն ընդհանուր աղքատության գիծը, կենսաթոշակների տարբերակման աճը և աշխատանքային ստաժի վրա հիմնված կենսաթոշակային համակարգից անցման ապահովումն ապահովագրական վճարների ծավալով պայմանավորված կենսաթոշակային համակարգին:

Եկամտային քաղաքականության հիմնական գերակայությունները պետք է ուղղված լինեն բյուջետային և սոցիալական ենթակառուցվածքների ոլորտի ցածր վճարվող աշխատողների աշխատավարձերի առաջանցիկ աճի ապահովմանը այնպես, որ դրանք առնվազն երկու անգամ գերազանցեն աղքատության ընդհանուր գծի մակարդակը, ինչպես նաև օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխանեցմանը աղքատության ընդհանուր գծին:

Հաջորդ գերակայությունը պետության ֆինանսական կարողությունների աճն է՝ պայմանով, որ չխաթարվեն կայուն բարձր տեմպերով տնտեսական աճի հնարավորությունները: Այդ աճը կապահովվի հարկային մուտքերի (ՀՆԱ 0,3-0,4%-ի չափով տարեկան աճ՝ հիմնականում հարկային վարչարարության կատարելագործման և հարկային համակարգի պարզեցման արդյունքում), ինչպես նաև բյուջեի պակասուրդը անվտանգ սահմաններում ավելացնելու միջոցով: Աղքատության և անհավասարության հաղթահարման տեսակետից այդ աճն անհրաժեշտ է պետական ծախսերի մեջ սոցիալական ոլորտի ծախսերի ծավալների առաջանցիկ աճը ապահովելու համար:

Տնտեսական անվտանգության տեսակետից հաջորդ կարևոր գերակայությունը պետական ներդրումային ծրագրերի ծավալային աճն է և դրանց ուղղումը աղքատության (այդ թվում՝ մարդկային աղքատության) ու

անհավասարության նվազեցման նպատակներին:

Տնտեսական անվտանգության տեսակետից կրթության բնագավառում առաջնային է համարվելու հանրակրթական ոլորտի հետագա զարգացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ավագ դպրոցում ընդգրկվածության աստիճանի աճին: Հատուկ պետք է շեշտադրվեն մասնագիտական կրթության բնագավառում առկա մատչելիության հիմնախնդիրները: Համակարգի արդյունավետության բարձրացումը և պետական ծախսերի ծավալի ավելացումը դիտվում են որպես դրված նպատակներին հասնելու հիմնական միջոց:

Առողջապահության ոլորտում մատչելիության բարձրացումն ապահովվելու է պետական ծախսերի աճի, պետական ֆինանսական միջոցների ներոլորտային համապատասխան վերաբաշխման և օպտիմալացման ու կառավարման բարեփոխումների արդյունքում արդյունավետության բարձրացման հաշվին:

Աղբյուրներ և գրականություն

1. Содействие развитию предпринимательства: бизнес, работающий на бедных. Отчет для генерального секретаря ООН, UNDP, 2004, с. 8.
2. *Джеймс Вулфенсон, Франсуа Бургиньон*, «Развитие и сокращение масштабов бедности: оглядываясь в прошлое, заглядывая в будущее», Всемирный банк, октябрь 2004г.
3. Доклад о развитии человека 2004. Культурная свобода в современном многообразном мире, UNDP, ПРООН, изд-во «Весь мир», 2004.
4. «Սոցիալ-տնտեսական վերափոխումները ԱՊՀ երկրներում. ձեռքբերումներն ու հիմնախնդիրները» համաժողովի նյութեր, Մոսկվա, 2004թ. սեպտեմբերի 13-14, www.iet.ru:
5. *Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ.,* «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 58:
6. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (հաստատված է ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ):
7. *Մարկոսյան Ա.,* «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», #3 (5), 2004, էջ 31-34:
8. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004:
9. ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2003:
10. Պարենային ապահովություն և աղքատություն. 2004 թվականի հունվար-սեպտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004, էջ 39:

Ապրիլ, 2005թ.

НЕРАВЕНСТВО В РАСПРЕДЕЛЕНИИ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

Ашот Маркосян, Нуне Гегамян

Резюме

Как социально-экономическое явление бедность стала следствием неравного распределения и перераспределения материального богатства (природных ресурсов и результатов труда) внутри общества. Чтобы социальное неравенство сохранялось на «естественном» уровне, т.е. когда «верхи довольны, а низы не протестуют», необходимо справедливое распределение как собственности, так и материальных и духовных плодов деятельности общества. В этом состоит суть социальной политики государства, в этом же кроется сложность ее реализации. В данном контексте справедливое распределение доходов является залогом гармоничного и устойчивого развития общества. Надо иметь в виду, что механизм рыночного саморегулирования не в состоянии решить данную проблему самостоятельно и без регулирующего вмешательства государства в этой сфере не обойтись.

Методология расчета индекса развития человеческого потенциала (ИРЧП) для развитых и развивающихся стран представляет достаточно хорошую статистическую базу для разработки и реализации адекватной социальной политики. По данным ООН, по индексу развития человеческого потенциала Армения находится на 82-ом месте среди 177 стран мира и входит в число стран со средним уровнем развития (показатель ИРЧП составляет 0,754). Наши соседи по региону занимают 91-е (Азербайджан) и 97-е (Грузия) места. Основной проблемой стран нашего региона считается низкий уровень валового национального продукта на душу населения.

Приоритетным направлением экономического курса в Республике Армения стала борьба с бедностью. Для успешного осуществления данной политики разработана и принята постановлением Правительства РА стратегическая программа по борьбе с бедностью. В данной статье проведено исследование целевых установок этой программы, осуществлен анализ ситуации и показателей, характеризующих неравенство в распределении доходов и бедность (расслоение) населения. Разработаны рекомендации относительно приоритетов государственной социальной политики, направленной на выравнивание распределения доходов населения.